ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սեղանների ձեռքբերման գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.02.2022թ. ժամը 14:30-ին Էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան

Մարիամ Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բաղայան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	« ՖՈՌՏՈՒՆԱ 4 » ՍՊԸ
2	«Փայլակ Թևանյան Հակոբի» Ֆ/Ա

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 ԷԱՃ-ի Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվայի ն գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		« ՖՈՌՏՈՒՆԱ 4 » ՍՊԸ		«Փայլակ Թևանյան Հակոբի» Ֆ/Ա	
		Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	1250000	1031242	1237490.40	1875000	1940625

4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 « ՖՈՌՏՈՒՆԱ 4 » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հավելված 1.2-ում հայտարարագիրը ներկայացնող անձի տվյալները սխալ է լրացված և բացակայում է հայտարարագիրը ներկայացրող անձի ստորագրությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ՖՈՌՏՈՒՆԱ 4 » ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.1 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022թ փետրվարի 25-ին, ժամը 10:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 25.02.2022թ. ժամը 10:30-ին

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան

Մարիամ Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բադալյան

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6.1 **«ՖՈՌՏՈՒՆԱ 4» ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Տվյալներ մերժված և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել **«ՖՈՌՏՈՒՆԱ 4 » ՍՊԸ** -ին:

7.2 Հակադարձ աճուրդի արդյունքում **«Փայլակ Թևանյան Հակոբի» Ֆ/Ա-ի** հայտը՝ համակարգի կողմից մերժվել է նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.Գնահատման արդյունքների մասին

8.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Արա Խաչատրյան /նախագահ/

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Մարիամ Պողոսյան

_____ Կարինե Բադալյան /քարտուղար